

Հաստատում էմ  
Տնօրենի Ա. Հարությունյան  
31.08.2022թ.



Արովանի Ն. Վանյանի  
անվան թիվ 5 հիմնական  
դպրոց

<<ԱԲՈՎՅԱՆԻ Ն. ՎԱՆՅԱՆԻ  
ԱՆՎԱՆ ԹԻՎ 5 ՀԻՄՆԱԿԱՆ  
ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ-Ի

**ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**

Digitally signed by HARUTYUNYAN  
MARGARITA 7614880471  
Date: 2022.09.20 12:05:46 AMST

ԴԱՍՂԵԿԻ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«ԱԲՈՎՅԱՆԻ ՆՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ N5

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ » ՊՈԱԿԻ IV<sub>ռուս.</sub>

ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿ՝ ՔՐԻՍՏԻՆԵ ԱԼԲԵՐՏԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ

2022-2023 ՈՒՍ. ՏԱՐԻ

## ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասավարը՝

1) դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

2) մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

3) նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

4) անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

5) իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

6) կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

7) դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հուլիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի  
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն , կետ 74 )

### Սովորողի իրավունքներն ու պարտականությունները

111. Դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ:

112. **Սովորողն իրավունք ունի՝**

1) ստանալու հանրակրթության պետական կրթական չափորոշչին համապատասխան կրթություն.

2) ծնողի համաձայնությամբ՝ ընտրելու ուսումնական հաստատությունը և ուսուցման ձևը, ինչպես նաև դպրոցում առկա հոսքը, ստանալու վճարովի կրթական ծառայություններ.

3) անվճար օգտվելու դպրոցի ուսումնականության բազայից.

4) ստանալու կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բավարարմանն ուղղված աջակցություն.

5) մասնակցելու ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների.

6) պաշտպանված լինելու ցանկացած ֆիզիկական և հոգեբանական ճնշումներից, շահագործումից, մանկավարժական և այլ աշխատողների ու սովորողների այնպիսի գործողություններից կամ անգործությունից, որով խախտվում են սովորողի իրավունքները կամ ոտնձգություն է կատարվում նրա պատվի ու արժանապատվության նկատմամբ.

7) դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը.

8) ազատորեն փնտրելու և մատչելի կերպով ստանալու ցանկացած տեղեկատվություն՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի.

9) ազատ արտահայտելու սեփական կարծիքն ու համոզմունքները.

10) խրախուսվելու օրինակելի վարքի կամ բարձր առաջադիմության համար.

11) օգտվելու օրենքով և դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված այլ իրավունքներից:

### 113. Սովորողը պարտավոր է՝

1) կատարել դպրոցի կանոնադրության և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջները.

2) ստանալ հանրակրթության պետական չափորոշիչներին համապատասխան գիտելիքներ, ձեռք բերել և տիրապետել համապատասխան հմտությունների ու կարողությունների, բավարարել սահմանված արժեքային համակարգին ներկայացվող պահանջները.

3) հաճախել և մասնակցել ուսումնական պարապմունքներին.

4) կատարել օրենքով ու դպրոցի ներքին կարգապահական կանոններով սահմանված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ պարտականություններ:

114. Հանրակրթական դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ՝ համաձայն առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի:

115. Յուրաքանչյուր սովորող տարեկան առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (կանխարգելիչ) հետազոտություն, որն իրականացվում է դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից, իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային սպասարկման առողջապահական կազմակերպության կողմից՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

116. Դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:

117. Դպրոցի ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով ու կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն:

118. Սովորողի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու օրվանից հետո մեկ տարվա ընթացքում կարգապահական տույժը կարող է հանվել, եթե սովորողը նոր կարգապահական խախտում թույլ չի տվել և իրեն դրսևորել է որպես բարեխիղճ, օրինակելի, կարգապահ սովորող:

119. Սույն օրինակելի կանոնադրության 117-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված կարգապահական տույժը մեկ ուսումնական տարվա ընթացքում նույն սովորողի նկատմամբ կրկնակի կիրառվելու դեպքում դպրոցը կարող է դիմել սոցիալական աջակցության բնագավառի լիազոր մարմին՝ երեխայի համար սոցիալական աջակցության ծառայություն կազմակերպելու վերաբերյալ առաջարկությամբ:

120. Սովորողների համար հիմնադրի, նախարարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, դպրոցի, ինչպես նաև սոցիալական գործընկերների, կազմակերպությունների, անհատների կողմից կարող են սահմանվել բարոյական և նյութական խրախուսման ձևեր՝ շնորհակալագիր, գովասանագիր, դրամական խրախուսում կամ կանոնադրությամբ սահմանված այլ ձևեր:

107. Դպրոցի սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան՝ դպրոցի գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու, դրանք դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններ ներկայացնելու, սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ դպրոցի կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով և ղեկավարվում է նախարարության կողմից հաստատված աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:

108. Աշակերտները կարող են նաև ըստ հետաքրքրությունների ստեղծել ակումբներ, միավորումներ, որոնք աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ են:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի  
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն )

## Ծնողական խորհուրդ

96. Դասարանների ծնողական խորհուրդները (կազմված՝ նախագահից և երկուսից չորս անդամից) ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից՝ մեկ ուսումնական տարվա համար:

97. Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ, ծնողական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհրդի նախագահը մանկավարժական խորհրդի անդամ է:

98. Դպրոցի ծնողական խորհրդի նախագահը խորհրդի նիստից առնվազն երեք օր առաջ խորհրդի անդամներին պատշաճ կերպով տեղեկացնում է նիստի անցկացման տեղի, ժամի և օրակարգի մասին: Ծնողական խորհրդի որոշմամբ՝ նիստի օրակարգում կարող են կատարվել փոփոխություններ:

99. Դասարանական և դպրոցական ծնողական խորհուրդների նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է ծնողական խորհուրդների անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են քվեարկությամբ մասնակցած անդամների ձայների մեծամասնությամբ: Ծնողական խորհուրդների յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Ձայնի փոխանցումն արգելվում է:

100. Դասարանական ծնողական խորհուրդների նիստերին մասնակցում են դասղեկները, իսկ դպրոցական ծնողական խորհրդի նիստերին՝ տնօրենը:

101. Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, համադպրոցական ժողովներ՝ առնվազն երկու անգամ: Տնօրենի, ծնողական խորհուրդների և դասղեկների նախաձեռնությամբ՝ կարող են հրավիրվել արտահերթ համադպրոցական և դասարանական ծնողական ժողովներ:

102. Դպրոցի ծնողական խորհուրդը

1) դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրում է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուն:

2) դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պարտականությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ:

3) աջակցում է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում:

4) ներկայացնում է ծնողներին անհրաժեշտ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները, մասնակցում դրանց մշակման և տրամադրման միջոցառումներին:

5) լսում է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին, ստանում ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները:

6) ամրապնդում է դպրոցի և ծնողների միջև կապերը, մանկավարժական աշխատողների և ծնողների կողմից երեխաների դաստիարակության նկատմամբ ձևավորում է միասնական պահանջներ:

7) ծնողներին ներգրավում է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում:

8) օգնում է դպրոցին՝ սովորողների հիմնական պարտադիր կրթությունն իրականացնելու գործընթացում:

9) մասնակցում է սովորողների ուսուցման ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցում է դպրոցի ուսումնականության բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների:

10) մասնակցում է ծնողագուրկ և սոցիալապես անապահով երեխաներին նյութական օգնություն ցույց տալու աշխատանքներին:

11) աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

12) ապահովում է երեխայի իրավունքների պաշտպանությունը դպրոցում:

13) ծնողներին ապահովում է տեղեկատվությամբ, կազմակերպում սեմինարներ, խորհրդատվություններ:

14) ծնողներին ծանոթացնում է իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով սահմանված պատասխանատվությանը:

103. Դպրոցի ծնողական խորհուրդը համագործակցում է դպրոցի մանկավարժական և այլ խորհուրդների հետ:

104. Դպրոցի ծնողական խորհուրդը կարող է տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկ ներկայացնել դպրոցի խորհրդին:

105. Ծնողական խորհրդի քարտուղարը կազմում է նիստերի արձանագրությունները: Համադպրոցական և դասարանական ծնողական ժողովների նիստերի արձանագրությունները և ընդունված որոշումները երեք աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են դպրոցի կայքէջում:

106. Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրագործման համար դպրոցի ծնողական խորհուրդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է իրականացնել այլ լիազորություններ:

(ՀՀ կառավարության 2002 թ. Հունիսի 25-ի N 1392-Ն որոշում,  
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ Օ Ր Ի Ն Ա Կ Ե Լ Ի  
Կ Ա Ն Ո Ն Ա Դ Բ ՈՒ Թ Յ ՈՒ Ն )

# ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ)



<<Աբովյանի Ն. Վանյանի անվան N5 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ի IV<sup>տաս</sup> դասարանում անցած տարվա տարեկազմում սովորում էր 20 աշակերտ, իսկ տարեվերջում՝ 20աշակերտ՝ 14 տղա և 6 աղջիկ: Նրանցից մեկն այս տարի տեղափոխվել է ընտանիքով ՌԴ: Տարեվերջյան գնահատականների ամփոփման արդյունքում սովորողներից III դասարանը գերազանցությամբ ավարտեց 7 աշակերտ, լավ՝ 6, իսկ բավարար՝ 7 աշակերտ:

Դասարանում տիրում է սիրո և համերաշխության մթնոլորտ, կան կարգապահ, ինչու չէ՝ նաև անկարգապահ մի քանի աշակերտներ, որոնց հետ հաճախ տարվել են համապատասխան աշխատանքներ, որոնց արդյունքում թերությունները շտկվել, կամ հասել են նվազագույնին:

Երեխաներն ունեն տարբեր հետաքրքրություններ: Արտադասարանական աշխատանքների և ուսուցիչ-աշակերտ սերտ կապերի շնորհիվ բացահայտվել են նրանցից յուրաքանչյուրը: Նրանց մեջ զարգացրել են մարդկային որակները, հանդուրժողականությունը, ընկերասիրությունը, փոխօգնությունը, միմյանց նկատմամբ սիրալիր և հարգալից վերաբերմունքը, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունքը, ազգային արժեքների պահպանումը, որոնք շատ կարևոր են անձի ձևավորման համար:

## 2.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Կազմակերպչական աշխատանքներ:
2. Հարթապահության կազմում:
3. Դասարանական անկյունի ստեղծում:



4. Ծնողական ժողովների կազմակերպում:
5. Դաստիարակչական, ճանաչողական, զարգացնող, ստեղծագործական միջոցառումների և էքսկուրսիաների կազմակերպում:
6. Երեխաների վարքագծի շտկման ուղղությամբ աշխատանքների իրականացում՝ տարբեր եղանակների, միջոցների, մեթոդների կիրառմամբ:

### 3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>3.1. ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</b>
<p>Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Ծանոթացնել հայ առաքելական եկեղեցու պատմությանը: Կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը: Այցելել պատմամշակութային վայրեր, եկեղեցիներ:</p>
<b>3.2. ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ</b>
<p>Նպաստել սովորողների գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Ձևավորել գեղեցիկը տեսնելու, գնահատելու, արժևորելու կարողություններ: Ծանոթացնել ազգային ավանդույթներին, տոներին: Կազմակերպել բնության զարթոնքին նվիրված միջոցառումներ: Աշակերտների հետ ստեղծել դասարանական անկյուն, պաստառներ, թեմատիկ նկարներ:</p> <p>Ամենօրյա շփումը գեղեցիկի հետ նպաստում է երեխայի կողմից գեղեցիկի ընկալմանը, գեղեցիկի կառուցմանը, ստեղծմանը և ի վերջո՝ գեղեցիկ միջավայրում ապրելու ցանկությանը, պահանջմունքի զարգացմանը:</p> <p>Բարեկիրթ միջավայրը երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանն է և միջոցը:</p>

### **3.3. ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ծանոթացնել հայ ժողովրդի հերոսական անցյալին: Սերմանել հարգանք , սեր հայրենիքի , ազատամարտիկների , նորոյա հերոսների սխրագործությունների նկատմամբ: Նպաստել ազգային մտածելակերպի ձևավորմանը: Խոսել Արցախյան պատերազմի մասին: Զրույց-քննարկում կազմակերպել նորոյա հերոսների մասին:

### **3.4. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Հետևել աշակերտների առողջությանը, ֆիզիկական պատրաստվածությանը, կեցվածքին, քայլվածքին, կազմակերպել սպորտլանդիաներ: Նպաստել աշակերտների ֆիզիկական ներդաշնակ զարգացմանը, բարձր աշխատունակության բարձրացմանը: Սովորեցնել հետևել անձնական հիգիենային:

### **3.5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**


Սերմանել դրական վերաբերմունք , սեր աշխատանքի նկատմամբ , սովորեցնել գնահատել ուրիշի աշխատանքը, պահպանել դպրոցական գույքը: Մասնակից դարձնել հանրագուտ աշխատանքին Կազմակերպել դասարանական հերթապահություն, սովորեցնել խնամել ծաղիկները, մաքուր պահել դասասենյակը,:

### **3.6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

Զարգացնել պատասխանատու վերաբերմունք շրջակա միջավայրի նկատմամբ : Կազմակերպել ճանաչողական էքսկուրսիաներ, զրույցներ «Երկրագունդը մեր տունն է » խորագրով:  
Բնապահպանական դաստիարակությունը նպատակ ունի երեխայի մեջ ձևավորելու ճանաչողական, բնապահպանական գիտելիքներ, էկոլոգիական գիտակցություն, հուզական, հոգատար, մարդասիրական վերաբերմունք բնության, շրջակա միջավայրի նկատմամբ, բնության հետ հաղորդակցվելու ունակություն, էկոլոգիական կուլտուրա:

### 3.7. ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Կազմակերպել ծնողական ժողովներ: Փոխկապակցված պահել դպրոց-ընտանիք շղթան: Քննարկել համատեղ լուծման խնդիրներ, կազմակերպել մանկավարժական խորհրդատվություններ, ձևավորել երեխայի դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ, հայացքներ:





**ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
I	<<Գիտելիքի օր>>	02.09-09.09	ուսուցիչ, աշակերտ
II	<<Խաչվերաց տոն>>	12.09-16.09	ուսուցիչ, աշակերտ
III	<<ՀՀ անկախություն օր>>	19.09-23.09	Ուսուցիչ, աշակերտ
IV	<<Հայրենիք կերտողը հենց ես եմ>>	26.09-30.09	ուսուցիչ, աշակերտ
V	<<Ուսուցչի դերը մեր կյանքում>>	03.10.-07.10	Ուսուցիչ, աշակերտ
VI	<<Ովքեր են իմ ընկերները, ինչն եմ կարևորում ընկերության մեջ>>	10.10-14.10	Ուսուցիչ, աշակերտ

VII	<<Ես տարիներ անց>>	17.10-21.10	աշակերտ
VIII	<<Աշնանային պարահանդես>>	31.10-04.11	Ուսուցիչ, աշակերտ, ծնող
IX	<<Խնամքով օգտագործել դասագրքերը>>	07.11-11.11	Աշակերտ, ուսուցիչ
X	<<Մարդիկ, որոնց կուզեի ես նմանվել>>զրույց	14.11-18.11	Ուսուցիչ, աշակերտ
XI	<<Երկրագույրը բոլորիս տունն է>> զրույց	21.11-25.11	Ուսուցիչ, աշակերտ
XII	<<Իմ կատարած բարի գործերը>> զրույց	28.11-02.12	Ուսուցիչ, աշակերտ
XIII	<<Մեր վատ սովորությունները և պայքարը դրանց դեմ>>	05.12-09.12	Ուսուցիչ, Աշակերտ, ծնող
XIV	<<Համակարգիչն ընկեր է, թե՛ թշնամի >>	12.12-16.12	Ուսուցիչ, աշակերտ
XV	<<Մենք առողջ ապրելակերպի կողմնակիցներ ենք>>	19.12-23.12	Ուսուցիչ, աշակերտ
XVI	<<Ինչպես դիմավորեցինք Ամանորը>>	09.01-13.01	Ուսուցիչ, աշակերտ
XVII	<<Էթիկա և էսթետիկա լինենք ավելի բարեկիրթ>>	16.01.20.01	Ուսուցիչ, աշակերտ
XVIII	<<Առնո Բարաջանյան, երաժշտության ուժը>>	23.01-27.01	Ուսուցիչ, աշակերտ
XIX	<<Հզոր ու հպարտ հայոց բանակ>>	30.01-03.02	Ուսուցիչ, աշակերտ

XX	<<Արդարացի և անարդար արարքներ>>	06.02-10.02	Ուսուցիչ, աշակերտ, ծնող
XXI	<<Տյառնընդառաջ>>միջոցառում	13.02-17.02	Ուսուցիչ, աշակերտ
XXII	<<Ավելի շատ գիրք կարդալու պատճառներ>>	20.02-24.02	Ուսուցիչ, աշակերտ
XXIII	<<Սպորտի դերը մեր կյանքում>>	27.02-03.03	Ուսուցիչ, աշակերտ, ծնող
XXIV	<<Իմ բարի, իմ հոգատար>>	06.03-10.03	Ուսուցիչ, աշակերտ
XXV	<<Ջանասիրություն և բարեխղճություն>>	13.03.-17.03	Ուսուցիչ, աշակերտ
XXVI	<<Նկարում ենք միասին>>	20.03-24.03	Ուսուցիչ, աշակերտ
XXVII	<<Ճանապարհային երթևեկության կանոնները>>	03.04.-07.04	աշակերտ
XXVIII	<<Մոր կերպարը>>	10.04-14.04	աշակերտ
XXIX	<<Ում եմ համարում գեղեցիկ մարդ>>	17.04-21.04	աշակերտ
XXX	<<Հայոց մեծ եղեռնի հիշատակի օր>>	24.04-28.04	Ուսուցիչ, աշակերտ
XXXI	<<Ինչպես հոգ տանել բույսերի և կենդանիների մասին>>	01.05-05.05	Ուսուցիչ, աշակերտ
XXXII	<<Արցախյան հերոսամարտեր>>	08.05-12.05	Ուսուցիչ,

			աշակերտ
XXXIII	<<Հայտնի մարդկանց կյանքի պատմությունները>>	15.05-19.05	Ուսուցիչ, աշակերտ
XXXIV	<<Իմ վախերը>> Ամփոփում	22.05-26.05	Ուսուցիչ, աշակերտ











**ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ,  
ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ**

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՂԸ
1.09.22թ.	Գիտելիքի և դպրության օր	Դպրոցի բակ
20.09 .22թ.	ՀՀ անկախության 31-րդ տարելիցին նվիրված կավճանկարչություն	Դպրոցի բակ
10.12.22թ.	Ամանորյա տոնահանդես	Դասասենյակ
19.02.23թ.	Գրքի խորհուրդը: Մայրենիի տոնը	Դասասենյակ
03.04.23թ.	Մարտի 8-ի և ապրիլի 7-ի խորհուրդը	

**ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ,  
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԽՄԲԱԿՆԵՐԻՆ**

	Նախասիրական- առարկայական խմբակ	Գեղարվեստական, երաժշտական խմբակ	Մարզական խմբակ	Այլ խմբակ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				
14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				
23				
24				
25				
26				
27				
28				
29				
30				
31				
32				
33				
34				

**ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿԶԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ**

Անցկացման օրը	Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	Ծանոթություն
02.09.22թ.	Զրույց<<Գիտելիքը ուժ է >>թեմայով	
09.09.22թ.	Դպրոցում պահելաձևի քննարկում	
16.09.22թ.	Իմ ընտանիքը	
23.09.22թ.	Անկախության գույներ: Կավճանկարչություն	
30.09.22թ.	Զրույց <<Մեր հայրենիքի հերոս զավակները>>	
07.10.22թ.	Մաքուր պահենք բնությունը: Զբոսանք աշնանային պուրակում	
14.10.22թ.	Ոսկեհեր աշուն	
21.10.22թ.	Հանդուրժողականություն: Ինչպես լինել հանդուրժող	
04.11.22թ.	Փոքրիկ բնապահպանները: Կարմիր գիրք	
11.11.22թ.	Զրույց <<Ինչպես պաշտպանվել երկրաշարժից>>	
18.11.22թ.	Զրույց<<Ինչպես պաշտպանվել փմռան սառնամանիքից>>	
25.11.22թ.	<<Բնական պաշարներ>>	
02.12.22թ.	Քննարկում՝ կոնֆլիկտների լուծման բոլոր եղանակները	
09.12.22թ.	Պաստառի պատրաստում՝ <<Անմահ հերոսներ>>	
16.12.22թ.	Ամանորը տարբեր երկրներում	
23.12.22թ.	Ամանորյա տոնահանդես	
13.01.23թ.	Հայաստանի այն վայրերը, որտեղ կուզեի լինել	

20.01.23թ.	Հայոց Բանակին նվիրված երգի ուսուցում	
<b>Անցկացման օրը</b>	<b>Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը</b>	<b>Ծանոթություն</b>
27.01.23թ.	Քննարկում՝ համակարգիչն ու հեռախոսը մեր առօրյայում	
03.02.23թ.	Հովհ. Թումանյանի հեքիաթների ընթերցում՝ քննարկում	
10.02.23թ.	Գրքի տոնին ընդառաջ՝ «Գիրքը իմ լավագույն բարեկամն է >>	
17.02.23թ.	Մայրենիի տոնին նվիրված պաստառի պատրաստում	
24.02.23թ.	Ճիշտ սնվելու իմ տարբերակը	
03.03.23թ.	Գարնան զարթոնք: Բանաստղծությունների ընթերցում	
10.03.23թ.	Տոնական բացիկների պատրաստում	
17.03.23թ.	Բնության փոփոխությունների դիտարկում <<Գարունն արթնացել է >>	
24.03.23թ.	Զրույց՝ «Ընթերցանությունը մեր կյանում»	
07.04.23թ.	<<Ինչպես շնորհավորեմ մայրիկիս տոնը>>	
14.04.23թ.	Զրույց՝ «Համացանցի վտանգները և առավելությունները»	
21.04.23թ.	<<Երկրագունդը իմ տունն է>> քննարկում	
28.04.23թ.	Տեսանյութի դիտում <<Հայոց մեծ եղեռն թեմայով>>	
05.05.23թ.	Զրույց՝ «Մեր երկիրը՝ երեկ, այսօր և վաղը»	
12.05.23թ.	Հայրենասիրական երգերի ուսուցում	
19.05.23թ.	Քննարկում՝ Ղ. Աղայանի «Անահիտը» հեքիաթը	
26.05.23թ.	Իմ ձեռքբերումները այս ուսումնական տարում	







--	--	--	--

**ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ**

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ժողովի համառոտ բովանդակությունը	Ծանոթություն

**ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ**

Նախագահ՝ Բարսեղյան Լիա Լյովայի

անդամներ՝ Դանիելովա Հռիփսիկ Սերգեյի

Նիկալաեվա Նարինե Իոսիֆի

քարտուղար՝ Խաչատրյան Գոհար Հրանտիկի

**ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ**

Անցկացման օրը	Քննարկվող հարցեր	Ծնողկոմիտեի նիստի համառոտ բովանդակություն	Ցանկություն

**Անհատական աշխատանքներ ծնողների հետ**

Օրը՝ \_\_\_\_\_

Նպատակը՝ \_\_\_\_\_

Արդյունքը՝ \_\_\_\_\_

Օրը՝

---

Նպատակը՝

---

Արդյունքը՝

---

Օրը՝

---

Նպատակը՝

---

Արդյունքը՝

---

Օրը՝

---

Նպատակը՝

---

Արդյունքը՝

---

Օրը՝

---

Նպատակը՝

---

Արդյունքը՝

---

ԴԱՍԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԱՎԱՐՏԻՆ





